ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 ապրիլի 2017 թվականի N 90 -Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի առաջին մասով ու 1.12-րդ կետի <<բ>> ենթակետով՝

ո ր ո շ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման <<Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված միջոցներից սոցիալական աջակցության նպատակով 84 /ութսունչորս/ քաղաքացիների հատկացնել միանվագ դրամական օգնություն 4 060 000 /չորս միլիոն վաթսուն հազար/ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:
2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ֆ.Ափինյանին՝ անկանխիկ, բանկային համակարգի միջոցով կատարել գումարների վճարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ԱԲՈՎՅԱՆ

2017թ. ապրիլի 19
ք. Իջևան